ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» նոյեմբերի 2015 թվականի N: 239-Ա ք.Գյումրի

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՓՈՂՈՑԻ 9/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տրդատ Ճարտարապետ 9/1 շենքի՝ որպես պետական սեփականություն անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2004 թվականի հունիսի 30-ի թիվ 455371 վկայականը, Գյումրի քաղաքում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված բնակելի շենքերի բնակարանները վիճակահանությամբ բաշխման գործընթացի վերաբերյալ մարզային հանձնաժողովի 2000 թվականի սեպտեմբերի 6-ի արձանագրությունը և Գյումրու քաղաքապետարանի կողմից 2000 թվականի սեպտեմբերի 30-ին տրված «Բնակվելու թույլտվությունը», ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով՝

Աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման շրջանակներում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված Տրդատ Ճարտարապետ փողոցի 9/1 շենքի թիվ 4, չորս սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ.

Գասպարյան Մելիքսեթ Ալբերտի,
Հովսեփյան Սվետլանա Ալբերտի,
Գասպարյան Սարգիս Ալբերտի,
Գասպարյան Աննա Մնացականի,
Գասպարյան Ալբերտ Մելիքսեթի,
Գասպարյան Անի Մելիքսեթի,
Հովսեփյան Վոլոդյա Ավագի,
Հովսեփյան Վահե Ավագի,
Պետրոսյան Անահիտ Մարլենի,
Գասպարյան Նարեկ Մանուկի,
Գասպարյան Լուսինե Սարգսի:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է